

հավաստի տվյալներ: Հեղինակը լայնածավալ աշխատանք է կատարել 2019 - 2022թթ. «Բեզլարյան» ԲԿ մանկական գինեկոլոգիայի բաժանմունք և «Ուիզմոր» Քլինիք դիմած 417 դեռահասների տվյալների ուսումնասիրման ուղղությամբ: Հետազոտությունն իրականացվել է դեռահասի, նրա ծնողի կամ խնամակալի կողմից տեղեկացված համաձայնության հիման վրա: Իրականացվել է դեռահասների ուսումնասիրվող կոնտիգենտի պատահականացում ըստ տարիքի, մենարխեի և այլ ցուցանիշների, մշակվել են հետազոտության մեջ ընդգրկվելու հստակ չափանիշներ:

Դաշտանային ցիկլի խանգարումների հիմքում ընկած գինեկոլոգիական հաճախ հանդիպող հիվանդությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հետազոտվող դեռահասները բաժանվել են երկու խմբի: Առանձնացվել է ստուգիչ խումբ, որտեղ ներառված կանոնավոր դաշտանային ցիկլ ունեցող դեռահասները հուշաքննությամբ և հետազոտության ողջ ընթացքում չեն ունեցել ձվարանի գոյացություն կամ ձվարանի վիրահատական միջամտություն:

Հետազոտության նյութի և մեթոդների նկարագրությունը սկսվում է դեռահասների անկետային տվյալների հավաքագրումից, հուշաքննության հիման վրա հարցաթերթերի և կյանքի որակի գնահատման համար SF-12 միջազգային թեստի հայալեզու տարբերակի լրացումից, շարունակվում կլինիկական և լաբորատոր հետազոտությունների իրականացումով: Կիրառվել են հետազոտության ինչպես ավանդական, այնպես էլ հատուկ մեթոդներ՝ փոքր կոնքի և վահանաձև գեղձի գերձայնային հետազոտություն: Կատարվել է նաև դեռահասների ծայրամասային արյան մեջ ձվարանային պահուստը բնութագրող հորմոնների ուսումնասիրություն:

Մանրակրկիտ ուսումնասիրվել են բոլոր կլինիկական խմբերի արդյունքները: Հիմնվելով սեփական նյութի վրա՝ եզրակացվել է, որ ձվարանի գոյացության հյուսվածաբանական տեսակը ներգործություն ունի ձվարանային պահուստի վրա: Էնդոմետրիոմա և ցիստադենոմա (5-7սմ տրամագծով) ունեցող դեռահասները ռիսկի խումբ են վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստ ունենալու առումով, քան տերատոմա և ձվարանի ֆունկցիոնալ կիստա ունեցող դեռահասները: Էնդոմետրիոմա և ցիստադենոմա ունեցող դեռահասների մոտ հակամյուլերյան հորմոնը և ձվարանի անտրալ ֆոլիկուլների քանակը վիճակագրորեն զգալի ցածր էին տերատոմա և ձվարանի ֆունկցիոնալ կիստա ունեցողների համեմատ: Ձվարանի վրա